



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 137183 գործարքներ, որոնց քանակը 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 5.3%-ով:

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 37192 օտարման գործարքների 78.2%-ը կազմել են առուվաճառքները, 20.7%-ը՝ նվիրատվությունները և 1.1%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 37.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 25.8%-ով: 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 10254 առուվաճառքի գործարքների 66.7%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 6.3%-ով:

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

| Վարչական շրջաններ                              | Միջին գները<br>/դրամ/      |                            |
|--|----------------------------|----------------------------|
|  | հունվար-նոյեմբեր<br>2009թ. | հունվար-նոյեմբեր<br>2008թ. |
| Կենտրոն  | 471600                     | 482100                     |
| Արաբկիր  | 357500                     | 404300                     |
| Քանաքեռ-Զեյթուն                                | 275900                     | 306600                     |
| Նոր-Նորք                                       | 230900                     | 271100                     |
| Ավան   | 232900                     | 269300                     |
| Էրեբունի                                       | 247200                     | 270000                     |
| Շենգավիթ                                       | 241600                     | 278600                     |
| Դավթաշեն                                       | 260700                     | 291700                     |
| Աջափնյակ                                       | 236000                     | 273300                     |
| Մալաթիա-Սեբաստիա                               | 225700                     | 261200                     |
| Նուբարաշեն                                     | 141800                     | 154700                     |
| <b>Միջինը Երևանում<br/>/բացի Նորք-Մարաշից/</b> | <b>265600</b>              | <b>296600</b>              |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 10.5%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ կնվազեն շուրջ 24.3%-ով:

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 3185 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 30.5%-ով:

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

| Մարզեր      | Քաղաքներ    | Միջին գները<br>/դրամ/      |                            |
|-------------|-------------|----------------------------|----------------------------|
|             |             | հունվար-նոյեմբեր<br>2009թ. | հունվար-նոյեմբեր<br>2008թ. |
| Արագածոտն   | Աշտարակ     | 134400                     | 129800                     |
|             | Ապարան      | 42600                      | 33900                      |
|             | Թային       | 48400                      | 43700                      |
| Արարատ      | Արտաշատ     | 89600                      | 99600                      |
|             | Մասիս       | 127000                     | 129200                     |
|             | Վեդի        | 88100                      | 80100                      |
|             | Արարատ      | 84000                      | 62800                      |
| Արմավիր     | Վաղարշապատ  | 165000                     | 166300                     |
|             | Արմավիր     | 116400                     | 120700                     |
|             | Մեծամոր     | 80300                      | 80900                      |
| Գեղարքունիք | Սևան        | 91200                      | 92500                      |
|             | Գավառ       | 47000                      | 47100                      |
|             | Մարտունի    | 79300                      | 68000                      |
|             | Վարդենիս    | 32900                      | 31500                      |
|             | Ճամբարակ    | 18600                      | 16100                      |
| Լոռի        | Վանաձոր     | 92200                      | 93200                      |
|             | Ստեփանավան  | 54200                      | 46600                      |
|             | Սպիտակ      | 72900                      | 61400                      |
|             | Ալավերդի    | 33000                      | 30700                      |
|             | Տաշիր       | 35200                      | 31400                      |
|             | Թումանյան   | 6000                       | 5600                       |
|             | Շամլուղ     | 3400                       | 3200                       |
|             | Ախթալա      | 13800                      | 12900                      |
| Կոտայք      | Աբովյան     | 144600                     | 171000                     |
|             | Նոր Հաճն    | 133000                     | 126500                     |
|             | Բյուրեղավան | 99300                      | 103400                     |
|             | Եղվարդ      | 121600                     | 118000                     |
|             | Հրազդան     | 62500                      | 68300                      |
|             | Ծաղկաձոր    | 179000                     | 151500                     |
|             | Չարենցավան  | 84600                      | 90100                      |
| Շիրակ       | Գյումրի     | 108400                     | 101900                     |
|             | Արթիկ       | 59000                      | 55600                      |
|             | Մարալիկ     | 30400                      | 27200                      |
| Սյունիք     | Գորիս       | 126300                     | 105300                     |
|             | Կապան       | 106100                     | 91100                      |
|             | Սիսիան      | 87800                      | 74100                      |
|             | Մեղրի       | 55100                      | 46600                      |
|             | Ագարակ      | 33000                      | 29200                      |
|             | Քաջարան     | 57200                      | 48600                      |
|             | Դաստակերտ   | 7800                       | 7000                       |
| Վայոց Ձոր   | Վայք        | 73600                      | 76000                      |
|             | Եղեգնաձոր   | 109300                     | 97400                      |
|             | Ջերմուկ     | 119300                     | 128600                     |
| Տավուշ      | Դիլիջան     | 94200                      | 93900                      |
|             | Իջևան       | 136300                     | 124700                     |
|             | Բերդ        | 42600                      | 39000                      |
|             | Նոյեմբերյան | 33500                      | 30200                      |
|             | Այրում      | 23500                      | 21100                      |

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 4.8%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա հանրապետության մարզերում 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ կնվազեն շուրջ 11.4%-ով:

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 3796 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 1010, մարզերում միասին վերցրած՝ 2786: 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 28.5%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 13.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 32.8%-ով:

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Վարչական շրջաններ                            | Միջին գները<br>/դրամ/      |                            |
|--|----------------------------|----------------------------|
|  | հունվար-նոյեմբեր<br>2009թ. | հունվար-նոյեմբեր<br>2008թ. |
| Կենտրոն                                      | 493000                     | 496700                     |
| Արաբկիր                                      | 390000                     | 421500                     |
| Քանաքեռ-Զեյթուն                              | 299500                     | 316300                     |
| Նորք-Մարաշ                                   | 297800                     | 288100                     |
| Ավան   | 259300                     | 278200                     |
| Էրեբունի                                     | 272100                     | 278800                     |
| Շենգավիթ                                     | 264400                     | 284100                     |
| Դավթաշեն                                     | 289500                     | 304300                     |
| Աջափնյակ                                     | 264900                     | 287100                     |
| Մալաթիա-Սեբաստիա                             | 254600                     | 278400                     |
| Նուբարաշեն                                   | 154900                     | 159600                     |
| <b>Միջինը Երևանում<br/>/բացի Նոր-Նորքից/</b> | <b>294600</b>              | <b>308500</b>              |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 4.5 %-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ կնվազեն շուրջ 19.3%-ով:

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Մարզեր      | Քաղաքներ    | Միջին գները<br>/դրամ/      |                            |
|-------------|-------------|----------------------------|----------------------------|
|             |             | հունվար-նոյեմբեր<br>2009թ. | հունվար-նոյեմբեր<br>2008թ. |
| Արագածոտն   | Աշտարակ     | 140900                     | 133500                     |
|             | Ապարան      | 44800                      | 36700                      |
|             | Թալին       | 51200                      | 46500                      |
| Արարատ      | Արտաշատ     | 96700                      | 104000                     |
|             | Մասիս       | 136800                     | 132900                     |
|             | Վեդի        | 92400                      | 87400                      |
|             | Արարատ      | 86300                      | 66600                      |
| Արմավիր     | Վաղարշապատ  | 174000                     | 169700                     |
|             | Արմավիր     | 123200                     | 124300                     |
| Գեղարքունիք | Սևան        | 97600                      | 94700                      |
|             | Գավառ       | 53200                      | 49400                      |
|             | Մարտունի    | 82700                      | 72800                      |
|             | Վարդենիս    | 36900                      | 34200                      |
|             | Ճամբարակ    | 21800                      | 20300                      |
| Լոռի        | Վանաձոր     | 99400                      | 98100                      |
|             | Ստեփանավան  | 57700                      | 51500                      |
|             | Սպիտակ      | 75600                      | 65700                      |
|             | Ալավերդի    | 36000                      | 33700                      |
|             | Տաշիր       | 38400                      | 35100                      |
|             | Թումանյան   | 10200                      | 9900                       |
|             | Շամլուղ     | 7400                       | 6800                       |
|             | Ախթալա      | 17700                      | 15900                      |
| Կոտայք      | Աբովյան     | 160700                     | 180200                     |
|             | Նոր Հաճն    | 141300                     | 131500                     |
|             | Բյուրեղավան | 107600                     | 106200                     |
|             | Եղվարդ      | 128500                     | 122900                     |
|             | Հրազդան     | 69600                      | 72100                      |
|             | Ծաղկաձոր    | 286700                     | 234700                     |
|             | Չարենցավան  | 91500                      | 92800                      |
| Շիրակ       | Գյումրի     | 116500                     | 105000                     |
|             | Արթիկ       | 62400                      | 58700                      |
|             | Մարալիկ     | 33400                      | 31300                      |
| Սյունիք     | Գորիս       | 131100                     | 110600                     |
|             | Կապան       | 112100                     | 94200                      |
|             | Միսիան      | 91600                      | 76200                      |
|             | Մեղրի       | 57800                      | 49600                      |
|             | Ագարակ      | 35400                      | 32100                      |
|             | Դաստակերտ   | 10400                      | 10300                      |
| Վայոց Ձոր   | Վայք        | 78500                      | 79700                      |
|             | Եղեգնաձոր   | 114400                     | 102000                     |
|             | Ջերմուկ     | 109700                     | 83600                      |
| Տավուշ      | Դիլիջան     | 105800                     | 101000                     |

|             |        |        |
|-------------|--------|--------|
| Իջևան       | 141600 | 128000 |
| Բերդ        | 45100  | 40900  |
| Նոյեմբերյան | 36300  | 35600  |
| Այրում      | 25300  | 22900  |

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 7.9%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա մարզերում 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ կնվազեն շուրջ 8.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 13254 միավոր /7199.38 հա/ հողեր, որից Երևանում՝ 797 միավոր /267.07 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6152 միավոր /6118.43 հա/, որից Երևանում՝ 34 միավոր /7.45 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 5000 միավոր /680.41 հա/, որից Երևանում՝ 582 միավոր /157.04 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1772 միավոր /192.54 հա/, որից Երևանում՝ 170 միավոր /67.44 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 167 միավոր /115.06 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /35.14 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 111 միավոր /73.28 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 33 միավոր /6.99 հա/ ընդհանուր մակերեսով,
- ջրային հողեր՝ 18 միավոր /11.97 հա/,
- անտառային հողեր՝ 1 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /0.70 հա/:

2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 11765 միավորի /6259.77 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 691 միավոր /253.71 հա/, նվիրատվության գործարքներ՝ 1308 միավոր /861.31 հա/, որից Երևանում՝ 92 միավոր /10.80 հա/ և փոխանակության գործարքներ՝ 181 միավոր /78.29 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /2.56 հա/:

Հանրապետությունում 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 38.2%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 31.5%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 43.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 32.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1255.39 հա, որից 1172.07 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 27.1%-ը կամ 3188 գործարքներ /2351.42 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 210 միավոր /146.36 հա/, իսկ 71.8%-ը կամ 8452 միավորը /3828.33

հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 479 միավոր /107.33 հա/: 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 125 գործարք /80.02 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, անտառային, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

|             | <b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b> |               |                                  |               |                                     |               |                                |               | <b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b> |               |                                  |               |                                     |               |                                |               |
|-------------|--|---------------|----------------------------------|---------------|-------------------------------------|---------------|--------------------------------|---------------|---|---------------|----------------------------------|---------------|-------------------------------------|---------------|--------------------------------|---------------|
|             | Գյուղատնտեսական նշանակության հողերի                    |               | Արդյունաբերական օբյեկտների հողեր |               | Բնակավայրերի հողեր                  |               |                                |               | Գյուղատնտեսական նշանակության հողերի       |               | Արդյունաբերական օբյեկտների հողեր |               | Բնակավայրերի հողեր                  |               |                                |               |
|             |  |               |                                  |               | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի |               | հասարակական կառուցապատ. հողերի |               |   |               |                                  |               | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի |               | հասարակական կառուցապատ. հողերի |               |
|             | Միավոր   | Մակերեսը /հա/ | Միավոր                           | Մակերեսը /հա/ | Միավոր                              | Մակերեսը /հա/ | Միավոր                         | Մակերեսը /հա/ | Միավոր                                    | Մակերեսը /հա/ | Միավոր                           | Մակերեսը /հա/ | Միավոր                              | Մակերեսը /հա/ | Միավոր                         | Մակերեսը /հա/ |
| Երևան       | 0  | 0.00          | 5                                | 1.99          | 117                                 | 124.35        | 88                             | 20.03         | 33  | 7.39          | 6                                | 33.15         | 384                                 | 26.97         | 56                             | 39.81         |
| Արագածոտն   | 162  | 625.73        | 2                                | 5.90          | 17                                  | 1.74          | 89                             | 8.91          | 451                                       | 379.97        | 1                                | 0.09          | 291                                 | 28.54         | 14                             | 0.95          |
| Արարատ      | 79   | 232.64        | 26                               | 6.70          | 91                                  | 9.25          | 135                            | 1.53          | 689                                       | 342.90        | 13                               | 11.18         | 563                                 | 49.00         | 48                             | 0.93          |
| Արմավիր     | 100  | 302.83        | 11                               | 4.34          | 36                                  | 2.18          | 105                            | 5.25          | 785                                       | 869.24        | 3                                | 0.03          | 585                                 | 57.73         | 48                             | 5.76          |
| Գեղարքունիք | 31   | 104.98        | 2                                | 0.63          | 198                                 | 16.02         | 67                             | 11.97         | 505                                       | 309.84        | 0                                | 0.00          | 160                                 | 17.28         | 20                             | 3.32          |
| Լոռի        | 35   | 39.58         | 9                                | 2.21          | 95                                  | 49.43         | 168                            | 6.32          | 412                                       | 253.19        | 5                                | 1.03          | 459                                 | 62.59         | 32                             | 1.43          |
| Կոտայք      | 184  | 289.17        | 37                               | 10.71         | 221                                 | 14.73         | 214                            | 7.58          | 868                                       | 561.97        | 7                                | 0.72          | 741                                 | 65.01         | 77                             | 9.31          |
| Շիրակ       | 30   | 67.84         | 12                               | 2.07          | 101                                 | 28.33         | 99                             | 3.92          | 341                                       | 317.22        | 1                                | 0.20          | 81                                  | 9.95          | 31                             | 1.32          |
| Սյունիք     | 33   | 144.68        | 8                                | 3.79          | 6                                   | 0.26          | 68                             | 2.95          | 129                                       | 159.58        | 3                                | 1.00          | 40                                  | 3.38          | 14                             | 2.10          |
| Վայոց Ձոր   | 69   | 86.26         | 2                                | 22.57         | 55                                  | 4.22          | 92                             | 1.53          | 137                                       | 50.53         | 0                                | 0.00          | 55                                  | 5.45          | 19                             | 3.04          |
| Տավուշ      | 26   | 25.61         | 7                                | 1.33          | 82                                  | 4.86          | 99                             | 7.15          | 177                                       | 82.08         | 0                                | 0.00          | 74                                  | 6.84          | 23                             | 7.67          |
| Ընդամենը    | 749  | 1919.32       | 121                              | 62.24         | 1019                                | 255.37        | 1224                           | 77.14         | 4527                                      | 3333.91       | 39                               | 47.40         | 3433                                | 332.74        | 382                            | 75.64         |

Ստորև ներկայացվում է 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

|             | Ուղղակի վաճառք |        |                             |        |                                    |        |                              |        | Աճուրդ վաճառք |         |                            |         |                             |        |                                    |        |                              |       |
|-------------|----------------|--------|-----------------------------|--------|------------------------------------|--------|------------------------------|--------|---------------|---------|----------------------------|---------|-----------------------------|--------|------------------------------------|--------|------------------------------|-------|
|             | Ընդամենը       |        | Արդյունաբ. օբյեկտների հողեր |        | Բնակավայրերի հողեր                 |        |                              |        | Ընդամենը      |         | Գյուղ. նշանակության հողերի |         | Արդյունաբ. օբյեկտների հողեր |        | Բնակավայրերի հողեր                 |        |                              |       |
|             |                |        |                             |        | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի |        | հասարակական կառուցապ. հողերի |        |               |         |                            |         |                             |        | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի |        | հասարակական կառուցապ. հողերի |       |
| Միավոր      | Մակերեսը /հա/  | Միավոր | Մակերեսը /հա/               | Միավոր | Մակերեսը /հա/                      | Միավոր | Մակերեսը /հա/                | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր  | Մակերեսը /հա/              | Միավոր  | Մակերեսը /հա/               | Միավոր | Մակերեսը /հա/                      | Միավոր | Մակերեսը /հա/                |       |
